Ը. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 11 ՅՈՒՆԻՍ 1905 ԹԻՒ 721

ՁԱՐԹՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Փանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին առելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

Դրամ դրկել անս հաս-

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charioum“ (Bu garie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

R. P. Kalémcarian Mechitharistengass. W. 4. Vienne (Autriche)

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՊԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԵՐՋԱՆԻԿ ԵՆ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐԸ

Յօդուածիս խորագիրը հաւանական է որ ընթերցողներիս մեծ զարմանք պէտք է պատճառէ, որովհետեւ յայտնի է թէ մակեդոնացիներուն ազատագրական ճիգերն էլ դեռ գրական հետեւանքի չեն հասել. խոստացված ռէֆորմները ոչ մի արդիւնք չեն տուել դեռ, երկիրը այսօր ներկայացնում է ընդհարումների և մորթումների հանդիսավայր, որոնք տեղի են ունենում յոյների, բուլգարների և սերբերի միջև։ Այդ տարբեր ցեղերի փոխադարձ կոտորումը բաւական չէ, իրանք բուլգարներն էլ, տարբեր ուղղութիւնների պատկանող յեղափոխականներ, սկսել են եղբայրասպանութիւնը մեծ չափերով։

Այս այսպէս լինելուց յետոյ, էլ ի՞նչ պատճառով մակեդոնացին երջանիկ է. վարմացած պիտի հարցնէ իրերի խորը չը թափանցող ընթերցողը։ Այո՛. երջանիկ է Մակեդոնիան, մեզնից աւելի երջանիկ, իր այդ բոլոր դժբախտութիւններովը միասին։

Ահա թէ ինչի։

Բուն Մակեդոնիոյ մէջ այսօր գոյութիւն ունի մի հասունացած, իր անելիքը գիտցող, արտաքին ուժերի և ազդեցութիւնների ոչ միայն չենթարկվող, այլ հարկադրող զուտ յեղափոխական, անվախ կազմակերպութիւն, որը ուժը և քաջութիւնը ունի հրապարակ գալու և յայտարարելու— մենք այնպիսի մարդկանց պէտքը չունենք, որոնք գալիս են միայն հրամայելու, անժամանակ շարժումներ ստեղծելու, որոնք միայն ժողովրդին ՁԱՍ են պատճառում. մեզ մօտ եկողը մեր հրամաններին պէ՛տք է ենթարկվի ամբողջովին։ Հայրենիքի համար անժամանակ մեռնելը գիտակից հայրենասիրութիւն չէ՝, մեռնելը բաւական չէ, պէտք է նաև գիտնալ թէ երբ պէտք է մեռնել որ հայրենիքը օգտվի այդ մահերից։

Գարունը Յօնչեւիստների մի խումբ գրեթէ ամբողջովին ջնջվեց ներքին կազմակերպութեան հրամանով. բուլգարական մամուլը, գրեթէ ամբողջովին, դատապարտեց այդ հաւաքական և շատ դաժան եղբայրասպանութիւնը։

Այդ առթիւ ներքին կազմակերպութիւնը «Ռէվոլիւցիոնէն լիստա» (յեղափոխական թերթ) կոչված օրգանի յունիսի համարի մէջ բացատրում է այդ եղբայրասպանութեան պատճառները և ապացուցում դրսից հրամայված շարժումներ կազմակերպողների ՁԱՍԱԿԱՐ և խոշոր սխալները— և պարզելով բուն երկրի մէջ ընտեղված իրական յեղափոխական կազմակերպութեան նպատակը, գործունէութեան ձեւը, ստեղծած ժողովրդային ուժը՝ բացականչում է։

—Ի՞նչ են ներկայացնում Սոֆիայի բարձրագոյն կոմիտէին պատկանողները։

Դրանք մի բուռն մարդիկ են, մի փոքրիկ խումբ. որոնց գլուխն է գեներալ Յօնչէվ, որը հակառակ այժմ բուլգարիայում ոչնչացած Մակեդոնօ Էտէրնէական ընկերակցութիւնների, շարունակում է ինքզինքը նախագահ հրաչակել, և այլ եւս գոյութիւն չունեցող բարձրագոյն կոմիտէի կողմից այդ տիտղոսով ստորագրել։ Այդ բարձրագոյնականները հանդիսանումենիբրեւ լիակատար բացասութիւն ներքին կազմակերպութեան—և այդ երկուսի մէջ տարբերութիւնը անդնդային է։

Բացի ձգտումների և նպատակների տարբերութիւնից, ներքին կազմակերպութեան կենտրոնը գտնվում է երկրում, սեփական հողի վրա։ Իսկ Յօնչեվիստները հրամանները ստանում են Սոֆիայից, ուր չեն կարող գիտենալ գործելու վայրկեանի պայմանները։ Ներքին կազմակերպութիւնը անկախ է և ինքնակամ, մինչդեռ բարձրագոյնականներն գտնվում են բուլգար վարչութիւնների ազդեցութեան տակ, որոնք աշխատում են ազատագրական գործը շահագործել պետական կամ կուսակցական շահերից մղված։

Վերջապէս, այն բազմաթիւ միջոցների դիմաց, որոնք գործ են դրվում թրքական լուծը թօթափելու համար ներքին կազմակերպութեան կողմից, բարձրագոյնականները ունին միայն մի միջոց—բունտը բարձրացրած Բուլգարիայից, արուեստականօրէն։ Այսօր ոչ մի խելացի մարդ չէ մտածում որ այդպիսի արուեստական շարժումներով տեղի ունեցած դրսի թեւարկութեամբ, Մակեդոնիան կարող է ազատվել։

Եղբայրական կռիւներին վերջ տալու և ազատութեան գործը չը դժուարացնելու համար նոյն թերթի մէջ յայտարարված է։

—Ամենից առաջ, մակեդոնական այն կարեւոր գործիչները, որոնք պատահմամբ կամ թէ այլ և այլ պատճառներով դեռ գտնվում են գեներալ Յօնցէվի շրջանակում և որոնք անկեղծօրէն նուիրված են ազատագրութեան գործին, պէտք է որ հրաժարվեն իրենց շեֆից, որը իրանց հաշիւ չէ տալիս իր ոչ մի որոշումի համար, դէպի դրանց վերաբերվում է իբրեւ իր ստորագասեալների, գործիքների և հրաման արձակում Սոֆիայից, ու մտնեն ներքին կազմակերպութեան մէջ։

Ներքին կազմակերպութիւնը պատրաստ է նրանց ամէն մէկին ընդունակութիւնների և անձնուիրութեան չափով տեղ տալ իր լայն շարքերում։ Վերջապէս այդ գործիչները պէտք է գիտակցեն թէ ստրուկի ազատութեան համար իրական մարանչողին անվայել է կուիլ ոչ ամէն բան զոհող ստրուկի անունով, այլ մի շրջանակի, որը գոյութեան ոչ մի իրաւունք չունի, մի կառավարութեան կամ անհատի անունով և մեռնի իբր անգիտակից գործիք ուրիշների անհատական, յաճախ շատ մութ և զզուելի շահերի համար։ Ազատագրութեան գատի դրօշակը պէտք բարձր բռնվի ամեն մի դրոշակից, մանաւանդ այն դրօշակիրներից, որոնց ետեւում թանգնված են անհատական փառասիրական ձգտումներ։ այդ դրօշակը միակը պէտք է լինի իսկական և գիտակից մարտնչողների համար։

* *

Դուք ասացէք, այս բոլորը կարդացողներ և իմացողներ. միթէ Մակեդոնիան երջանիկ չէ՞ որ կարողացել է իր ծոցում ստեղծել այնպիսի մի կազմակերպութիւնը որը վստահ իր ուժերի վրա կարողանում է դրսի ամեն տեսակի գործիչներին յայտարարել —մենք ձեզ չենք ենթարկվի։ Եթէ իրօք կուսողներ էք, համեցէք այստեղ։ մենք ամեն ընդունակութիւնների յարմար գործ կը տանք ձեզ։

Մակեդոնական յեղափոխութեան ամենամեծ յաղթանակը այս է բայց ոչ խախուտ ծրագիրը ռէֆորմների։

Ամբողջ սրտով յաջողութիւն ենք ցանկանում Մակեդոնացի ներքին գործիչներին որոնք իրենց ազատագրութեան գործը այդպիսի դրական հիմերի և իրական յեղափոխական սկզբունքների վրա են հիմնել։ Տառոսը մեզ։

ՎԱՐԴՕ

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆԻ ՄԸ ՓՈՐԵՐԸ

—oo—

Մէկ քանի տարի առաջ ֆրանսացի անիշխանական Ֆորթիւնէ Հանրի կերթայ Արտէնեան լեռներուն մէջ իր սկզբունքները գործնականապէս փորձելու համար գաղութ մը կը հիմնէ, իր յայտարարութեամբ ընկերական կազմակերպութեան առաջին բջիջը։ Վերջերս «Թանի» թղթակից ներէն մին այցելութեան կերթայ Հանրիի եւ կը տեսնայ փոքրիկ գաղութ մը, կազմուած երկու էրիկ-մարդերէ, քանի մը կիներէ եւ մա-

նուկներէ որոնք բնութեան ծոցին մէջ աշխատաւոր եւ հանգիստ կեանք կանցնեն հողը մշակելով գիտական հիմերու վրայ որուն տուած արդիւնքը արդէն սկսած է մերձակայ գիւղացիներուն բարի նախանձը շարժել, որոնք առաջները Հանրիին եւ ընկերներու մշակման ու աշխատութեան դէմ ծաղրի նիւթ դարձուցած էին։

Հանրի իր հիւրին կը պարզէ սկրսած գործին սկիզբները, անոր յառաջդիմութիւնը եւ նպատակները ու մէջտեղը որով կուզէ հասնիլ նպատակին։ Ան հետեւելը կը սէ հիւրին.

«Առանց յաւակնութիւնը ունենալու լուծել մարդկային խնդիրը, մենք կը ջանանք որոշել եւ նկատողութեան առնել բոլոր այն երեւոյթները որոնք կը յառաջանան մարդերու իրարու հետ ունեցած յարաբերութենէն։

«Մենք, իբր ազատ մտածողներ, կուզենք գիտնալ եթէ ոչ մարդիկ ինչպէս պիտի բարեշրջուին եւ վարուին իրարու հետ, զոնէ այն որ ինչպէս չը պիտի վարուին։ Հակառակ բոլոր ինքնութեան սիստէմներու սկսեալ միապետութենէն մինչեւ սոցիալիստական ըմբռնումը պետական կազմակերպութեան մասին, միակ եւ բացարձակ տէր մենք կուզենք տեսնալ եւ ստուգել թէ ազատ կացութիւնը մարդու մէջ ինչ պիտի երեւան հանէ։

«Ապագայ հասարակութիւններու համար օգնենք որոշելու սկզբնական բճիճին ձեւը եւ համերաշխ ընկերակցութիւնը։

«Դաստիարակութեամբ եւ ազատ մարդոց օրինակով երեւան բերենք եւ հաստատենք ազատութեան ըզգացումը։

«Ազատ աշխատութիւնով աշխատանքի նոր ըմբռնումը ստիպողական դարձնենք, որը պիտի վերածուի ստեղծագործութեան, ուրախութիւն եւ գոհութիւն պիտի դառնայ, փոխանակ մարդոց կեանքերը խորտակելու։

«Երջանիկ մարդիկը ցուցադրելով, իրականութեան մէջ մտցնենք իսկան երջանկութիւնը. բայց ոչ նախանձը որ բարոյական չէ եւ բացասական է։

Տնտեսապէս ցոյց տանք որ թէ ինչ կրնայ տալ ազատ համաձայնութիւնը եւ խուսափինք աշխատանքի կորուստէն։

«Մտաւորապէս — նկատենք այն երեւոյթները որոնք մեր մարդոց մէջ երեւան պիտի բերեն բնական բարեկեցիկութիւն— խելացութեան եւ գեղեցկութեան տեսարան մը։

«Բարոյապէս — ուսումնասիրենք բարոյական ամեն խնդիրները որ տեսնենք թէ բարեսիրութիւնը, ալթուրիզմ, լաւ ըմբռնուած եսասիրութիւնը—ինչ կրնայ արտադրել. որ կարենանք խելքերը կրթել այնպէս, որ անոնք ազատ ըլլան սուտի, կեղծիքի, նախապաշարումներու եւ անպէտք սահմանափակումներու կնիքէն։

«Մեր նպատակն է, եթէ կարենանք, ընկերաքանութեան տանք փորձական եւ դիտողութեան տեսակէտէն մշակած, աշխատանոցի գիտութեան բնաւորութիւն, որպիսին եւ պէտք է որ ըլլայ, որպէսզի ան իր քննադատական ձեւին մէջ արդարացի դժգոհութիւններու եւ աւելի արդարացի բարկութեան ու անլուծելիութեան օճախ չը դառնայ։

«Բոլոր միջոցները գործ պիտի դնենք կազմակերպելու հասերաշխ միջավայրեր որոնք պիտի կարենան տալ մարդկային նոր սերունդներ, որոնք պիտի ունենան ընդհանուր ծագում անոնց հետ, որ մենք ենք։

Այստեղ հանրիին հիւրը կը հարցնէ.

—Ենթադրենք որ քաթաքլիզմի մը չնորհիւ, որը շատ հաւանական չէ, աշխարհիս բոլոր տիրապետողները ոչնչացան, եւ մնան միայն գործաւորները. այն ատեն ինչ պիտի ընենք։

—Պրոլետարներուն պիտի ըսենք, մասնաւորապէս ատոնց շարժման ղեկավարներուն, դաս մը փորձն է։ Այս ոյն բճիճն է որուն նմանելով պիտի վերակազմուի ընկերութիւնը։ Իսայց մինչեւ այդ հեռաւոր օրը ես կը փափաքիմ որ մարդիկ պարզապէս հետեւին մեր ճիգերուն, նախ քան դատապարտելը։

Հանրի կը շարունակէ.

«Այստեղ ոչ ոք կը հրամայէ. ամեն անհատ անպայման ազատ է։ Երեկոյեան կը որոշուի վաղուան աշխատութիւնը։ Բայց երկրորդ օրը ամեն մարդ իր ուզածին պէս կաշխատէ. ով քալել կուզէ, կը քալէ. ով փորել կուզէ կը փորէ. ով երգել կուզէ կերգէ. միայն այս ապահով է որ երեկոյին աշխատութեան ծրագիրը իրականացած է։

Այդ արդէն կապացուցէ որ աշխատութիւնը երբ բռնադատուած չէ, խաղալիք է։ Գաղութին մէջ միայն մէկ ազդարար նշան կայ, որուն ամենքն ալ կը հպատակուին.

Ճաշին զանգը։

Հիւրը կը շարունակէ պատմել։

Հանրի չի ներեր որ գաղութին մէջ ձրիակերներ առաջանան, եւ եթէ առաջանան գաղութէն կը վռնտուին։

Անհամեմատաշխ անդամ առաջանալէ ալ չի վախնար, մտածելով գաղութին թիւը 20 հոգիէն չանցնել աւելցածները մղելով նոր գաղութ մը կազմելու։

Գաղութին սկզբնաւորութիւնը այնքան ալ վարդագոյն չէ. Հանրի իր խնայած հազար ֆրանքով, երկու ձեռքերով եւ կարիքային խոշոր հաւատքով սկսած է գործը. բարեբախտաբար վեհանձն մարդիկ, ինչպէս Անատոլ Ֆրանս, Ժոնէ եւ ուրիշ փիլիսոփաներ, գրագէտներ, գիտնականներ օգնութեան հասեր են իրեն։

Այժմ յաջողութիւնը մօտիկ է.

Հունձքը պատրաստուելուն պէս գաղթականները չուկայ կելլան եւ օրական 20 ֆրանք եկամուտ ունին։

Այդ եկամուտով կը վճարուի հիմնական դրամագլուխը եւ փոխատուութիւնները, գաղութը հետզհետէ կը ընդարձակուի, ձուկեր կը բուծուին. բաղնիքներ կը պատրաստուին եւ այլ անհրաժեշտ բաներ։

Արդէն գաղութը կը զարմացնէ այցելուները, որոնք ամենքն ալ կը զարմանան երբ կիմանան թէ գաղութի ամեն մէկ անդամին վրայ օրական 45 սանթիմ ծախք կայ.

ՕԳՏՎԵՑԷՔ

Անցեալ համբրում, Ֆիլիպէի թղթակցութիւնով հաղորդում էր որ տաղանդաւոր դերասան պարոն Գալֆանան գտնվում է Ֆիլիպէում և արդէն պատրաստվում է իր սիրած Համլէտը ներկայացնել, շուրջը հաւաքելով տեղական թատերասէրներից մի քանի ուժեր։

Բուլգարահայը վերջին տասնամեակի մէջ թատրոնական ոչ մի կարեւոր ուժ չէ տեսել և չէ կարողացել ճաշակել իրական գեղարուեստի քաղցր հաճոյքները։ Կազմակերպվել են տեղական թատերասիրասիրական խմբեր, որոնք երբէք բախտ չեն ունեցել իրական արուեստագէտների խաղերը տեսնելու, որպէս զի հնարաւորութիւնը ունենան գործնական դասեր առնելով յառաջդիմել իրենց սիրած գործի մէջ։ Եւ այժմ թէ մեր դերասան կոչվածները, թէ թատերասէրները և թէ հասարակութիւնը պարտաւոր են ներկայ լինել Գալֆանանի ներկայացումներին սովորելու և հաճոյք ստանալու համար։

Ճշմարիտ է, Բուլգարահայ գաղութի մէջ շատ չնչին է այն մարդկանց թիւը որոնք կարող են ըմբռնել աշխարհի ամենամեծ թատերագրի՝ Շէքսպիրի գրածները, բայց և այնպէս լաւ խաղացողի մօտ նրանք կը գտնեն և կըմբռնեն այն՝ ինչ որ բնա-

---

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

37

Ը.

(Շար. նախորդ թիւին)

—Եւ ամեն տեղ ձանձրանում էի, ամեն տեղ կցում որ կեղծում եմ, իմ առաջ եւ դերասանութիւն եմ անում, զբաղվում եմ մի գործով որ բոլորովին ինձ չէ հետաքրքրում, սիրելի չէ, բաղձալի չէ եւ անհանդուրժելի է։ Կերակրում է էհ փառք Աստուծու, բայց վատ է կերակրում։ Ամիսը յիսուն վարսուն ռուբլի. միթէ՞ այդ դրամ է մենակ ապրող կնոջ համար եւ այն էլ «ճաշակով» կնոջ։

Իսկ ամեն կողմից ասում են.— ձեր գեղեցկութեամբ պէտք է թքոտ երեխաների գլուխը խփէք (ա. գ բ)- (ա գ բ)։ Մի խօսք ասացէք եւ պատրաստ են հրաշալի ձիերը, բնակարան, կահկարասին Սվերսկու խանութից։

—Փոխանակ գրասեղանի առջեւ գեղեցկութիւնդ թաղցնելու, համաձայն է՞ք ինձ հետ ապրել։ Ես տարին յիսուն հազար եկամուտ, դղեակ եւ սեփական տուն ունեմ Պարիզում։

—Էհ, դուք միայն թղթերի վրա մէջքերնիդ էք կորացնում եւ կազմուածքդ փչացնում. ձեզ պէտք է աղէսի մորթից վերարկուի մէջ փաթթել ու երեքձիանի կառքով թոցնել Սամարղանդ։

—Վիկտորիա Պավլովնա, եթէ կուզէ՞ք հարստութիւնս ձեր վրա կը հաստատեմ։

Բայց ինչն էր փրկում ինձ ծախուելլալու։ Ինարկէ ոչ Պորուպկովի սիրուհու բարեմասնութիւնը եւ ոչ սիրական մաքրութիւնը որով յանձնվել էի Սֆանասիչին. ոչ, բայց իմ նկարագրիս մէջ կան եթէ ոչ գործոն. բայց-լայն -յամառ գծեր որոնք ինձ թոյլ չեն տալիս ծախվել, քօքսթի վերածվել։

Սարկութեան հանդուրժել չեմ կարող. իսկ ծախվելը նշանակում է սարուկ դառնալ։ Ճիշդ է կարող ես հրամայողիդ հետ ուզածիդ պէս վարվել, բայց գիտակցութեանդ մէջ, գաղտնաբար սարուկ ես։ Կուզես ընդրան ծեծիր, բայց այնուամենայնիւ կարող է քեզ թէ ոսկու մէջ լողացնել եւ թէ փողոց վռնտել ասելով, —քեզ համար նոր ապէր փնտրիր, որը կը գնէ թէ քո կամքդ եւ թէ մարմինդ։

Մի դէպք եմ յիշում, երբ դերասանուհի էի. այո, վեց ամսի չափ։ Ոչ մի յաջողութիւն բեմի վրա, բայց երկրպագուների ամբոխ. իսկ ես, Նեզիրի պէս, ամբողջ խմբի մէջ, «Գանձ եմ պահպանում». սէզոնը սարսափելի է. փող՝ գրօշ չը կայ. բնակարանի վարձը չէ տրված. մուշտակս գրաւ է դրված, ուտելու բան չունեմ։

Կերակրվում եմ բարեհաճ տուղների օգնութեամբ. նիրված շաքարեղէնները մանրավաճառի մօտ փոխում եմ խավեարի եւ սպիտակ ձկան հետ, ստացածս պսակների ժապաւէնները նոյնպէս այնտեղ եմ տանում. կեանք չէ այլ տաժանակիր աշխատանք։ Իսկ իմ շուրջը ներկայացումներ սկսելուն պէս վխտում են այնպէս, ինչպէս նէգինայի շուրջը։ Իմ ետեւից էր ընկել ինչ որ Վելիկատով։

Ամէնքն էլ ընկեր, ընկերուհի, բարեկամներս գլուխս տանում են

—Ի՞նչ էք յամառում. ի՞նչ էք յորանջում. էլ ինչ իշխանի էք սպասում. դրանից լաւ մարդ չէ կարելի գտնել ամբողջ աշխարհում։

Նա էլ իբրեւ մարդ ինձ անհաճոյ չէր, գեղեցիկ, ոչ ծեր, խելացի, միլիոնատէր. իրօք դրանից էլ լաւ ի՞նչ կարող է լինել։ Սակայն սարկուհի դառնալ չէի ուզում։

Լաւ, ես թոյլ տուի որ ինձ համոզեն։ Ձերն եմ. յայտնեցի եւ տեսակցութիւն նշանակեցի։ Եկաւ. հարուստ նէրներ է բերել։ Ընդունեցի, իրար տնտղում ենք... Նա մոլորվել է թէ ինչպէս առաջին անգամ ցուցադրվի։ Իսկ ես իմ կողմից քաջալերութեան ոչ մի նշան չեմ ցոյց տալիս. ու յանկարծ սկսեցի բարձրաձայն ծիծաղել ու ասել։

Օնիսիմ Նիկոլայիչ, բայց ինչ էլ որ ասէք, մեր արածը յիմարութիւն է։

Նա չարանալու պէս եղաւ.

—Ինչպէ՞ս. այսինքն։

—Բայց դուք գիտէք որ ես ձեզ

կան է յառաջադիմելու, բարձրին ձգտելու բնազդը ունեցողների համար։

Ցաղոգութիւն մաղթելով պարոն Գալֆաեանին իր արտիստական այս պտոյտի մէջ, չեշտում ենք որ Բուլգարահայ գաղութը պարտաւոր է ամէն կերպ զօրավիգ հանդիսանալ պ. Գալֆայեանին։

ՌՈՒՍ ԿԵԱՆՔԷՆ

Յունիս 7 ին Ցարը իր ներկայութեանը ընդունելով զէմստվոներու և քաղաքային խորհուրդներու ներկայացուցիչները հետեւեալ ճառը արտասանած է. «Ձեզի մտիկ ընելուս համար գոհ եմ. կասկած չունիմ, պարոններ, թէ ուղղակի ինձի դիմելնուդ պատճառը դէպի հայրենիքը տածած ջերմ սէրն է։

Ես ալ Ձեզի և ամբողջ ժողովրդիս պէս վշտացած եմ այն դժբաղդութիւններով զորս երկրին պատճառեցին պատերազմը և ներքին խռովութիւնները իմ արքայական կամքս ան ղբրդուելի է եւ ես կոչ պիտի ընեմ ժողովրդի ներկայացուցիչներուն որ մասնակցին կառավարութեան գործունէութեան, որուն եւ ես պիտի հետեւիմ ամեն օր։ Դուք կրնաք ձեր մտիկ գիւղացիներուն եւ քաղաքացիներուն հաղորդել իմ խորին համոզումս, որ Ռուսիա վերածնուած պիտի դուրս ելլայ իր գլխուն եկած փորձութիւններու կոյտի տակէն։ Ինչպէս ժամանակ մը, դաշնակցութիւն մը պիտի հաստատուի ցարին և ժողովրդին միջեւ որը եւ պիտի կազմէ հիմքը կարգապահութեան համաձայն ռուսական հիմնական սկզբունքներու։

„Կը հաւատամ ձեր անկեղծ ցանկութիւններուն որ կուզէք ինձ օգնել այդ աշխատութեան մէջ։

* * *

«Ֆրանկֆ. Ցայթ.» թերթին մէջ հետեւեալ թղթակցութիւնը կայ Բեռլինէն.

«Թէեւ լրագիրները առանց նախնական գրաքննութեան կը հրատարակուին, այնու ամենայնիւ երեկոյները սրբագրութիւնները կը ղրկուին գրաքննական վարչութեան քննելու, որովհետեւ վստահ չեն թէ առաւօտեան արդէն թերթերը տարածուած, չարգիլուին գրաքննիչէն։ Հակառակ այդ միլիոններուն, որ 3000 ռուբլի երաշխաւորութեամբ առանց նախնական գրաքննութեան թերթ առնելը ցնորքի կը վերածեն, թերթերու հրատարակումը յաճախ կուշանայ, որովհետեւ երեկոյեան գրաքննիչը այնքան կրճատած կըլլայ, որ անկարելի կըլլայ նոր նիւթ մատակարարել որը կրկին գրաքննութեան կը ղրկուի միայն որոշ ժամերու մէջ։

Ահա քանի մը օրինակներ ազատական թերթերէն։ «Սին Ստեչեսավօ»ին մայիսեան 26 ի թիւը իր սովորական ծաւալին կիսուն չափով հրատարակուեցաւ, այնքան շատ խաղցած էր գրաքննիչի կարմիր մատիտը։ Երկու խմբագրականներ եւ առաջին երեսը գտնուած երկու ուրիշ յօդուածներ բոլորովին ջնջուած էին։

Առաջին յօդուածի մէջ կը խօսուէր ներքին գործոց նախարարի լիազորութեանց ընդարձակման մասին ու չը նայելով որ գրաքննիչը միայն յօդուածին մէկ մասը ջնջած էր, խմբագրութիւնը զայն չը կրցաւ հրատարակել, որովհետեւ չը ջնջուած մասերու համաձարումը հնդինակին մեկնակէտին բոլորովին հակառակը էր։

Երրորդ ջնջուած յօդուածը «Տիֆթաֆթուրա» խորագրով վիճաբանական յօդուած մըն էր „Մոսկովսքիյ Վեդոմոսթի“ թերթի դէմ, որը զինուորական տիքթաթուրութեան պաշտպան կը հանդիսանայ։

Յետոյ ուրիշ շատ մը յօդուածներ ոչնչացած էին գրաքննիչին անգութ կարմիր մատիտէն։



ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԷՆ

—○()—

ՆԷՆՈՒԷ, 7 յունիս 1905

Հակայեղափոխականները դեռ կը շարունակեն իրենց ագռաւային ու անճոռնի կոկոցները. եւ «ափպ իտիզ» կը հայհոյեն, կա՛ր ձեռ իրարու հետ մրցման ելած ըլլան. հայհոյանքի հազարը փարայ մըն է, «մի յաղ մի ձախ» կը շպրտեն որ կերթայ.....։

Արշակ Զօպանեանի աշակերտ, եւ կամ աւելի լաւ է ըսել հետեւորդ Սուրէն Պարթեւեան ըսուած ջլախտաւորը որ իր «խարազան» գրքոյկով անպատուեց՝ ու յաւիտենական սեւ ժուրը քսեց հայ գրականութեան երեսին. այժմս ալ հոս Ամերիկայի մէջ կը փորձէ արատաւորել հայ մամուլը, եւ իրեն իբրեւ գործիք ծառայեցնել։

Եւ ասիկինքը «յայտնի գրագէտ»(*) կոչող պարոնը՝ որ անցեալ տարի իր անզգուշութեան (*) պատճառաւ չարաչար խայտառակուեցաւ ամերիկեան դատարանին առջեւ ու հարիւր տալեռ ալ տուգանք տուաւ դեռ խելքը գլուխը թոփած չէ։

Սրհասը գիմաւորող արջերուն կը նմանի, որ իր աչքերը փակած, կը յարձակի դիմացը ելնողին վրայ, եւ կը փորձէ խածնել զայն։ Այլ եւս բան չը մնաց որ չրսէր ու չըգրէր «Հայհոյաթերթ»ին մէջ. այլ եւս մարդ չը մնաց որ չը փորձէր անպատուել ու ցեխոտել...։

Նպատակէս շատ հեռի է «թեւումն մասանցը» ընել. իր ըրած անխիղճ զրպարտութիւններուն կամ յարձակումներուն, միայն գաղափար մը տալու համար «Շարժումի ընթերցողներուն, կարժէ որ հոս մէջ բերիմ Մարսէյլի «Արմէնիայի և մասնաւոր»ի անոր խմբագիր պրն. Մ. Փորթուգալեանի նկատմամբ ըրած սպրդուգին մաս մը, որը ըրաւ ակէ մէկ երկու ամիս առաջ, իր կուսակցական աղտոտ կրքին գոհացում տալու համար. լաւ լսեցէք հիմայ, եւ բնաւ չը՛ սահմանիք կը խնդրեմ.....։

«Հա՛ց տուէք, հա՛ց՝ ծերացած հանրային գործիչներուն, հա՛ց տուէք, որպէսզի խնայեն անոնք նոր սերունդին այս կսկծալի ու անարգու տեսարանները... հա՛ց տուէք... Ու կապահովցնենք ամենքը՝ որ օր մը՝ մենք ա՛լ մեր կարգին պիտի նոյն պահանջը չընենք մեզի համար... Նոր սերունդին գործիչները — անշուշտ խօսքը իր մասին է. բայց լաւ էր որ ըսէր՝ «ես հայհոյիչս երդուած եմ միշտ հայհոյել—երդուած եմ չի ծերանալ... Միայն թէ խնա՛յուէր, խնայուէ՛ր անոնց դառնութեան ու աւաղանքի (°.°.°.°.) այս դժնդակ ատրիթները»..

«Հայհոյաթերթ» թիւ. 327

Ու հիմայ անշուշտ կը հարցնէք ինծի, թէ ինչո՞ւ այս բոլորը, ուրախ եմ որ երկար բացատրելու պէտք չեմ զգար բնաւ այսօր այլեւս, վասնզի հայ ժողովուրդին շատ լաւ ծանօթ է այս ու ոգբալի խմբակին նպատակը։ Ցեխոտել, զրպարտել, անպատուել, արատաւորել ահա միակ ձգտումը զոր ունի այս խմբակը. հայհոյել և այլ և այլ ածականներով որակել ամեն անոնք՝ որոնք հակայեղափոխական չեն՝ եւ պարագան եկած ժամանակ՝ քաջութիւնը կունենան ճշմարտութիւնը խոստովանել՝ ու զիրենք դիմակաթափ ընել։

Եւ Մ. Փորթուգալեան որ այսպէս անխղճօրէն կանպատուի, պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ այն, որ ինքը քաջութիւնը ունեցած է՝ ճշմարտութիւնը խոստովանելու, Սասունի անցեալ տարուան դժբաղդութեան մասին՝ այդ խմբակէ փրցուցած ՓԱԹԹԻԻՆ համար, բան մը որ ամէն հայրենասէր ու ճշմարիտ հայու պարտականութիւնն էր.

չեմ սիրում.

—Ցաւ ի սիրտ։

—Էհ, ուրեմն ես ձեր ինչին պէտք ե՞մ։

—Բայց ես ձեզ սիրում եմ։

—Այդ էլ դատարկ բան է։ Դուք բոլորովին ինձ չէք սիրում. ձեր անձնասիրութիւնը վիրաւորված է որ ես անմատչելի եմ հռչակված. դուք ուզում էք որ ամբողջ քաղաքը գոռայ որ ես ձերն եմ։

Ճի՞շտ, այնպէս չէ՞։

—Ի հարկէ ես իմ երջանկութիւնս մարդկանցից չեմ խլացնելու, բայց.

—Էլ ինչ «բայց», գլխաւորը այդ է. իսկ զգացմունքները դուք իբր համեմ էք դրել։ Եւ ի՞նչ զգացմունքներ կարող են լինել։ Դուք ինքներդ մտածեցէք. դուք իբր սիրահարված մարդ էք եկել, տիրանալու ձեր սիրած կնոջ. թէեւ գիտակցութիւնդ որ նա ձեզ չէ սիրում, դէպի ձեզ շատ անտարբեր է եւ եթէ ծայրահեղ կարիքի մէջ չը լինէր, երբէք ձեզ անձնատուր չէր լինի։ Անզգայ մարմնի համար պատրաստվում էք հազարներով ծախսել, Աստուած վկայ, շատ սուղ է. Օնիսիմ Նիկոլաեւիչ, եւ առեւտրական հաշիւ չէ։

Նա, ինքն էլ ծիծաղեց ու ասում է.—Զարմալի էք դուք. իսկ եթէ ես այդպիսի մի քմահաճոյք ունեմ. իսկ այդ դրամից էլ սուղ է։

—Այո, այդ խօսքը աւելի մտացի է, քան սիրումը. բայց քմահաճոյքին հետեւում է զղջումը։ Եւ մի՞թէ զղջման համար արժէ սուղ վճարել. ինչպէս ասել է պատմական մի մարդ։ Ես ժան էլ չէի գնի։ Ես ձեզ խօսք տի՛ւ, տեսակցութիւն ընչանակեցի, ձեր նէրները ընդունեցի. ետ չեմ ընկրկի, բայց ես ինքս ինձ չեմ ափսոսում, այլ ձեզ. չարժող բանի համար պէտք է մեծ ծախսեր անէք։

Մի՞թեւնոյնը դուք կարող էք ստանալ հարիւր անգամ աւելի ժան! այ Լիպան։

Տեսնում եմ որ զարմութիւն է պատճառում իմ ասածները ձեռքերը թափահարում է։

—Թողէք, թողէք, առեւտրական գործ է, թող այդպէս լինի։ Սակարկութիւն է թող սակարկութիւն լինի։ Իսկ դուք ձեր գեղեցկութեան ուրեմն ոչ մի արժէք չէք տալիս։

—Էհ գեղեցկութիւնը ի՞նչ է. գեղեցկութիւնով էք ուզում զմայլվել. հրամայեցէք իմ պատկերը նկարեն, կամ արձանս չինեն։ Այնու ամենայնիւ աւելի ժան կը լինի քան ես ողջս։

—Էհ, արձան, ցուրտ, մեռած մարմարիոն, փոխանակ այդ անուշ փափուկ ձեռքի։

—Էհ, դուք էլ մարմարիոնից մի չինել տուէք արձանս. այլ կաուչուկից. կակուղ է. ուզածիդ պէս կորանում. աչքերը դարձնում, շունչ է առնում։ Տաք լինելու համար, այդ տեսակ արձանի մէջ եռացող ջուր են լեցնում։ Կատարեալ իլիւզիոն, առանց անհաճոյ ընդհարումների։

—Մարդ ձեզ հետ կը մեռնի. իսկ ձայնը, անուշ խօսքը, որի համար երբեմն մարդ պատրաստ է կէս կեանքը տալ։

—Ախ, Աստուած իմ, ինձ համար, ֆոնոգրաֆ բերէք, ես նրանում ձեզ համար միլիոնաւոր փաղաքշական խօսքեր կասեմ. յետոյ մխիթարվեցէք ուզածներիդ չափ։

Այստեղ Օնսիմ Նիկոլայիչն էլ սկսեց կատակել։

—Այդ ֆոնոգրաֆներն էլ խոխոջանում են։

—Ուրեմն, եթէ ես ձեզ հետ կապվեմ, ոչ հարբուխ պէտք է առնեմ եւ ոչ էլ կոկորդի ցաւ։ Ուրեմն դուք բոնապետ էք. դուք ինձ ոտքերս թռչելու իրաւունք էլ չէք թողնելու։

Այդպէս ծիծաղելով վերջացրի. նա ձեռքը թափ տուեց ասելով.

—Աստուած ձեզ հետ. իրօք դուք տարօրինակ էք. ձեզնից սէր ստանալ կարելի չէ, իմ բարեկամութիւնն էլ կը փչանայ. բայց ես ձեր բարեկամութիւնը գնահատում էի. կեցցէք, զարթ էք. կեանքը ձանձրալի է եւ ուրախ մարդիկ ուզում են։

—Բայց այն, դուք մարդկանց ցոյց տալու մասին խօսեցիք. բայց այդ ճշմարտութիւն է. ես արդէն պարծեցել եմ. շատերը սպասում են. անյարմար է առանց ձեզ. ի՞նչպէս պէտք է անենք։

—Այդ ինչպէս ձեզ հաճելի է. թող ամբողջ աշխարհը կարծէ որ ես ձեր սիրուհին եմ. միայն թէ խնդրեմ առեւտուրը գոյութիւն չունենայ։ Աստուած վկայ որ չարժէ։ Այ հիմա մենք որչափ լաւ ենք ժամանցում. ես ձեզ եմ յարգում, դուք ինձ։ Իսկ այն ժամանակ ոչ ես ձեզ կը յարգեմ եւ ոչ դուք ինձ. ոչ բարեկամներ կը լինենք եւ ոչ սիրահարներ։

(Շարունակելի)

Երբ ես այս կէտը մատնանշեցի՝ ընթերցողները թող չը կարծեն որ նը-պատակ ունիմ պաշտպան հանդիսանալ պրն. Մ. Փորթուգալեանի, ոչ. բնաւ երբէք, եւ չեմ ալ կարծեր թէ ան պաշտպանուելու պէտք զգայ. քանի որ իրեն նպատակ ընտրած է. խօսել ճշմարտութիւնը. ալ ինչո՞ւ պիտի վախնայ ճշմարտութիւնը որքան ալ հալածուի. դարձեալ ան պիտի յաղթանակէ. մենք ստոր վստահ ենք։

Եւ այդ վստահութեամբ մենք կը դիմենք դէպի յառաջ. ու միշտ յառաջ, առանց ականջ կախելու հակայեղափոխական խմբակներ ձեռք առած՝ անպատիւ ու զզրելի փրօպականդային, թո՛ղ անոնք հայհոյեն որչափ որ կուզեն, թո՛ղ անոնք իրենց կուսակցական կրքերուն գոհացում տալու համար ջանան ցեխոտել, և այլ և այլ ստոր միջոցներով հայ յեղ անխոնջ գործիչները վարկաբեկել փորձեն, բայց մենք գիտենք մեր գործը, գիտենք թէ ինչպիսի սխմար ու պապուկ կը մտածեն, Լօնտօնի և Փարիզի պուլվառներուն մէջ իրենց օրերը անցնող հակայեղափոխական խմբակիրներ և յայտնի գրագէտներ(°°)։ Թո՛ղ պոռան սւ ճվան, թո՛ղ լան, և Եըլտրզի Կարմիր Սուլթանին ձրի փաստաբանները հանդիսանան, սակայն յեղափոխականը գիտէ իր ըրածը, ան գիտէ նաև թէ «համբերութիւն» քրստող պարոնները՝ ինչպիսի անհամբերներ էին որ՝ Լօնտօնի մէջ մէկէն երեք հատ դիակ գետին պառկեցուցին.... ու ետքէն ալ ելան «խաղաղութիւն ամենեցուն» պոռացին։

Յեղափոխականին համար բնաւ կարեւորութիւն չունին հայհոյանքներն ու սպառնալիքները, վայնասուններն. Երկրէն եկող աղէկտուր ձայնին կը նայի ան։

Ու երբ երբեմն կփորձուինք խօսել իրենց մասին, ատիկայ մենք կը հարկադրուինք ընել, վասնզի ինչպէս կըսեն «մուկը պղտիկ է, բայց կարասը կը մունտռէ», իրենք բանի չեն գար բայց կը ջանան սրտեր պղտորել։

Առասպելական խօսքերու ժամանակը անցած է այլեւս, կենդանի գործ հարկաւոր է, ով չի՛ լսեր երկրի յեղափոխականին տզեշարժ կոչը, նա հայ չէ՛ եւ Թուրքէն ա՛լ աւելի վատ մարդ։

ԵՐՈՒԱՆԴ-ՆԱՐՕՏ

ԼՕԱՐԱՆ

Վառնայի հայ երկսեռ հասարակութիւնը կը հրաւիրուի ներկայ գտնուիլ Գ.Դ. լսարանական ժողովին, որ պիտի գումարուի յառաջիկայ կիւրակի 12 յունիս 1905, կէս օրէ վերջ ժամը 3 ին դպրոցի սրահին մէջ։

Տիարք Քեշտմալճեան, Ս. Հինտլեան անցեալ ժողովին նիւթ եղած դպրոցական խնդրոյ մասին առաջարկներ պիտի ներկայացնեն, և որոնց մասին ընդհանուր վիճաբանութիւն պիտի ըլլայ։

Անցեալ ժողովին դպրոցական խնդրոյ շուրջ եղած տաք վիճաբանութեանց մէջ շատ զգալի եղաւ պատ. Թաղ. խորհրդոյ, և հոգաբարձութեան բացակայութիւնը, մարմիններ, որոնք, որ կոչուած են ուղղակի հետաքրքիր և հոգածու ըլլալ հանդէպ մեր ազգային վարժարաններուն, կը սիրենք յուսալ որ կը հաճին ներկայ ըլլալ յառաջիկայ ժողովներուն։

Ի դիմաց Հայկ. Ընթ. վարչութեան

Ատենադպիր Ատենապետ

Ց. Թ. Արապեան Օ. Օհանեան

10/23 Յունիս 1905

Վառնա

ԿՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Վառնա, կեդրոն փոզոցի մը մէջ մէկ ու կէս յարկով քարաշէն հաստատուն մը շինուած 95 քառակուսի մէթր տարածութեան վրայ, 245 քմէթր պարապ հողով։ Ունի 5 սենեակ, մէկ խոհանոց, լուացարան, հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են ընտանիքի մը հանգստութեանը համար։

Փափագողք կրնան դիմել «Շարժուժի» խմբագրութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պաթումէն յունիս 7 ին կը հեռագրեն որ Վանի ֆրանսական հիւպատոսը սկսեր է նպաստ բաժնել Սասունի և Տարոնի կարոտեալ հայերուն։

— Պաշտօնական աղբիւրներէ կիմացուի որ Թուրք կառավարութիւնը Մակեդոնիոյ երկաթուղիները զինուորներու հսկողութեան տակ դրեր է, որովհետեւ տեղեկութիւններ ստացեր է որ խորտակելու փորձեր պիտի ըլլան։

— Պոլսոյ պուլկար էքզարխը հիւանդութեան պատճառով անգ. եալ օր Սոֆիայի վրայով մեկներ է Եւրոպա։ Էքզարխը վաղուց իվեր Սուլթանէն արտօնութիւն կուզէր Եւրոպա երթալու և հիմայ հազիւ յաջողեր է։

— Պետութիւնները կը պատրաստուին Բ. Դրան տալ երկրորդ և աւելի խիստ նօթա մը, Մակեդոնիոյ Եկեմտական Քոնթրոլի առթիւ, որովհետեւ առաջին նօթային պատասխանը դեռ ստացած չեն։ Կը կարծուի որ Բ. Դուռը, իբր պատասխան պիտի ներկայացնէ իր կողմէն մշակուած նոր ծրագիր մը։

— Սելանիքի մէջ յոյները կը շարունակեն պուլկար ուսուցիչներ սպանելու փորձերը։

— Թուրք պաշտօնեաները պուլկարաց էքզարխին հետ մինչեւ սահմանագլուխ լուրջ ակնածութեամբ և յարգանքով վերաբերուեր են։

ՌՈՒՍԻԱ

Կովկասեան հեծելազօրքի հրամանատար ժէնէրալ իշխան Լուի Նաբօլէօն փոխարքայի կողմէն նշանակուած է Երեւանեան նահանգը խաղաղեցնելու համար։

— Թիֆլիսի քաղաքային խորհուրդը միաձայն որոշեր է իր ցաւակցութիւնները յայտնել վրաց հոգեւորականութեան, որուն ներկայացուցիչներուն հետ այնքան զէշ վարուեցան կառավարութեան գործիքները։ Ի միջի այլոց որոշեր է նաև գլխաւոր ռուս և օտար թերթերու մէջ հրատարակել իր ափսոսանքը որ Թիֆլիսի այդպիսի դէպքերու թատերավայր եղաւ։ Քաղաքային խորհուրդը Բարձ. իշխանութենէն կը խնդրէ խիստ քննութիւն մը կատարելու, որուն պիտի մատնակցին նաև քաղաքին ներկայացուցիչները։ Բռնութիւններու եւ քաղաքը ոստիկանութեան ու քսակներուն յանձնելու մասին։

— Ռուս մամուլը երկար յօդուածներ կը հրատարակէ ցարի զեմստվոներու ներկայացուցիչներուն ընդունելութեան արտասանած ճառին առթիւ, և այդ ընդունելութիւնը կը համարէ պատմական անցք մը, որմով սկիզբ կառնէ ռուս ժողովրդային ներկայացուցչութեան պատմութիւնը։

— Վիպօրկէն կը հեռագրեն որ նահանգապետ Մեսօնտովին վրայ սպանութեան փորձ կատարող Ռայնիկէ Բրիբալ 26 ամսուան բանտարկութեան դատապարտուեր է։

ԿՐԷՏԷ

Քանէէն կը հեռագրեն թէ հովանաւորող պետութեանց հիւպատոսները պետութիւններէն կը պահանջեն յեղափոխական շարժման դադարումը, և միջազգային ուժերուն գործելու ազատութիւն։

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Պուտապէշթէն յունիս 9 ին կը հեռագրեն. տարածուած լուրը՝ որ Հունգարիոյ մէջ յեղափոխութիւնը կը տիրէ անհիմն է և զրպարտութիւն. կայութիւնը ճիշդ որ ծանր է, սակայն կարգ ու կանոնը կը թագաւորէ թէ մայրաքաղաքին և թէ ամբողջ Հունգարիոյ մէջ։ Կը կարծուի որ Ֆէյէրվարիի դահլիճը պիտի յարատեւէ մինչեւ սեպ. 15։ Հաւանական է որ կացութիւնը շարունակէ այսպէս մնալ։

ՄԱՐՕՔԻ ԽՆԴԻՐԸ

Գերմանիա առաջարկած է գօնֆէրանս մը Մարօքի խնդրին համար. Անգլիա մերժած է մասնակցիլ, որ կը նշանակէ թէ չի ուզեր այդ գօնֆէրանսին տեսի ունենալը, Ֆրանսա դեռ պատասխանած չէ. Իտալիա և Աւստրիա համաձայնած են, միայն այն պայմանով որ եթէ միւս մեծ պետութիւններն ալ մասնակցին։

Ֆրանսա և Գերմանիա անընդհատ բանակցութիւններու մէջ են. Ռուսիէ հարցնողներուն որոշ բան մը չի պատասխաներ բանակցութեանց արդիւնքի մասին։

ՌՈՒՍՕ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ճաբոնացւոց կողմէն Մանչուրիոյ մէջ յարձակումները կը շարունակուին։

Բացայայտ է որ ճաբոնացիք որոշած են վճռական ճակատամարտ մը ևս տալ Մանչուրիոյ մէջ, նախ քան հաշտութեան իրական բանակցութիւններուն սկսելը։ Բանակցութեան վայր ընտրուած է Վաշինգթընը։ Հետզհետէ հաշտութիւն կնքուելու մասին կասկածները կը շատնան։ Բացորոշ է որ ճաբոնացիները չեն ուզեր իրենց յաղթութիւնները ժամն ծախել։

ԹԱՏՐՕՆ ՊՕՐԻՍ

Այս երեկոյ, ժամը ճիշդ 9 ու կէսին, «ՎԷՍԷԼՕ» հայ դերս. խմբին կողմէ, առաջնորդութեամբ Տ. Ա. Պէնլեանի պիտի ներկայացուի՝ «Կարմիր կատուի գենետուն» տրամ. գօմէտի 4 արար.

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացուի՝ «Ճիգրիք». կամ «Զաղացպան հայրը» տրամ. գօմէտի 3 արար։

Երգ և պարերք

ԼՕՑՍ ՏԵՍԱԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ «ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՅ» ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ

—○—

676 էջերէ բաղկացեալ այս գործը Արեւելեան և Հայկական խնդրոց ամփոփ մէկ պատմութիւնը կուտայ։ Կը պարունակէ շատ մը՝ Հայերուս համար շահեկան պաշտօնաթղթեր, միջազգային դաշինքներու մէջ անցած հայոց նպաստաւոր յօդուածներ. եւ 1895 ին հայկական վեց գաւառներու համար եղած Բարեկարգութեանց Ծրագիրը։

Այս կարեւոր նիւթը դիւրահասկրնալի ոճով եւ պարզ կերպով Հայ հասարակութեան ներկայացնել եղած է հեղինակին ջանքը եւ նպատակը։

Գործը բաժնուած է 2 հատորներու, որոնք թէեւ թզթակազմ, բայց հաստատուն կարուած ըլլալով դիմացկուն են եւ կրկին կազմելու պէտք չունին։

Երկու հատորները կրնան գատալ ստացուիլ՝ իւրաքանչիւրը 1 ու կէս շիլինկ. երկուքն ի միասին կազմուած՝ 3 շիլինկ։

Փոստին ծախքը գնողին վրայ։

Կողքին երկու կողմը դրուած են Իզմիրլեան Ս. Պատրիարքին եւ հեղինակին պատկերները։

Դիմել ուղղակի հեղինակին.

ԲՐՕՖ. Կ. ԹՈՒՄԱՑԵԱՆ

Զիկուիլ Լօնտօն.

Печатницана П. Глушковъ и С-ие, Варна